ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի հրավերով Եկեղեցիների համաշխարհային խորհրդի ընդհանուր քարտուղար, դոկտ. Է. Կ. Բլեյկը պաշտոնական այցելություն տվեց Նորին Սրբության, Մայր Աթոռ ս. Էջմիածնում, մարտի 30-ին:

Բարձրաստիճան հյուրը քրիստոնեական եկեղեցիների մեծ կազմակերպության սիրալիր ողջույնը բերեց Ամենայն Հայոց Հայրապետին և մոտիկից ծանոթացավ Մայր Աթոռիս հաստատություններին, հատկապես հոգևոր ճեմարանին և հայ եկեղեցու կյանքին Հայաստանում: Դոկտ. Բլեյկը այցելեց նաև ս. Հռիփսիմեի տաճարը, Երևանի առաջնորդանիստ ս. Սարգիս եկեղեցին և սուրբ Մեսրոպի անվան Մատենադարանը:

Եկեղեցիների համաշխարհային խորհրդի ընդհանուր քարտուղարը այս առթիվ անձամբ կրկնեց իր նախօրոք կատարած գրավոր պաշտոնական հրավերը Վեհափառ Հայրապետին ուղղյալ՝ սույն թվականի հուլիսի 10—13-ին այցելելու Ժնև՝ Եկեղեցիների համաշխարհային խորհրդի կենտրոնը, իբրև Գերագույն Պետ հայ եկեղեցու:

Վեհափառ Հայրապետը սիրով ընդունեց եղած հրավերը:

Մեծարգո հյուրը ս. Էջմիածնից մեկնեց մարտի 31-ին:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈ

ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ
31 մարտ 1967 թ.